

րուն վերնայարկը ելան Առաքեալները Փրկչին Համբարձումէն յետոյ Ձիթենեաց լեռնէն գալէն վերջ»։ Յետոյ ան կը խօսի ուրիշ մէկ քանի տուներու և այն եօթը սինակոկներուն վրայ, որոնցմէ մէկը տակաւին կը մնար Կոստանդիանոսի օրով, «իբրեւ զտաղաւար յայգւոջ» (Ես. Ա. 8)։ Եպիփան Սիոնի մէջ եկեղեցի չի յիշատակեր, բայց Էթէրիա ուխտաւորուհին 370ին կը յիշէ եկեղեցի մը ուր կը դնէ յարութենէ վերջ Յիսուսի երեւումները և Ս. Հոգւոյն գալուստը։ Վերջին ընթրեաց հաստատութիւնը տակաւին հոն չէին տեղեկանացներ, վասնզի Աւագ հինգշաբթի օրը հոն չէին հաղորդուէր. այս արարողութիւնը «խաչին ետեւը» տեղի կ'ունենար, հետեւաբար Գողգոթայի վըրայ, վասնզի տակաւին յատուկ տեղ մը յատկացուած չէր։ Բայց միեւնոյն դարուն Ադդիի վարդապետ Քրիստոս Երբքը Սիոնի եկեղեցին իր վերնայարկովը վերջին ընթրեաց տեղը կը նկատէ։ 460ին Աւագ հինգշաբթիի գիշերային պաշտամունքը հոն կը կատարուէր, ըստ տօնամակի (Dal. էջ 412-4)։ 867ին Բեռնարդոս վանական կը գրէ թէ Տիրոջ փշեայ պսակը կախուած էր Սիոնի եկեղեցիին մէջ (E. T. P. էջ 28)։ Վաղեմի հայ ուխտաւորն ալ կը յիշէ այս պարագան ըսելով. «Այլ թարբ (վանդակային հիւսուած) կախեալ է փայտեայ, և պսակ փշոյն կայ ի կախ զթարբէն, որ եղին կենարարին ի գլուխ» (Կաղ. էջ 421)։

Նորագոյն ուխտաւորներ Սիոնի եկեղեցիին վերաբերմամբ կը յիշեն հետեւեալ աւանդութիւնները իրենց օրագրութեանց մէջ. ա) քար մը որուն վրայ Յովհաննէս Աւետարանիչ պատարագած է. բ) Յուդայի տեղ ընտրուած՝ Մատաթիայի քարէ ակոռը. գ) այն վառարանը որով ընթրեաց երեկոյեան ոտնա-